11. ՍՈՒՖՐԵՆ

Կար-չկար մի թաքավոր. էդ թաքավորին իրեք տղա ուներ, ինչ որ խորհուրդ ուներ, պզտիկ տղի հետ կաներ, պզտիկ տղեն խելոք էր։

Մեկ օր խորհուրդ արեց, ասեց.— Ձեզ պըտի պսակեմ։

Պզտիկ տղեն ասեց.— Մեզ որ կպսակես, ման արի, որ իրեք ախչիկը մի տանից բերես։

— Որդի՛, իրեք ախչիկը մի տանից շատ կա, համա իմ հավանածը պըտի ըլի։

Տղեն ասեց.— Դու դիտաս, հալպաթ քու հավանածը պըտի ըլի։

Կանչեցին, վեզիրն էկավ, ասեց.— Թաքավորն ապրած կենա, ի՞նչ եք հրամայում։

Ասեց.— Ըսօր իմ պզտիկ տղի հետ խորհուրդ եմ արե, որ իմ տղեքին պսակեի, իմ պզտիկ տղեն ասեց. «Իրեք ախչիկը մի տանից ուզաս, հըմի իրեք ախչիկ մի տան շատ կա, վե՛ր էթանք ման գանք, ո՛րը հավանենք, էն ուզենք։

Վեզիրը ասեց.— Վե՛ր էթանք։

Էրկու հատ ձի նիլան, ընկան քաղաքները ման գալու. ի՛նչ-ղտաք ման էկան, ինչ տուն մտան, իրանց դիր չէկավ։

Ասեց.— Վեզի՛ր, շատ ման էկանք, արի՛ էթանք Ստամբոլ էլ պտըտենք ու թողանք էթանք։— Գնացին Ստամբո՞լ։ Ստամբոլա մեշն էլ շատ պտտեցին, էլի չգթան։

Ասեց.— Վեզի՛ր, էկել ենք Ստամբոլ, էթանք թաքավորին էլ տենանք, նոր թողանք ու էթանք։— Գնացին թաքավորի մոտը, ղոնախ էլան. թաքավորը բերեց, ըդոնց հաց քաշեց։ Իրեք հատ ախչիկ ըդոնց հաց ին բերըմ։ Հաց բերեցին, կերան։

Ստամբոլա թաքավորը էդ թաքավորին ասեց.— Ի՞նչ բանի համար եք էկել։

Ասեց.— Թաքավոր ապրած կենա, ես իմ պզտիկ տղի հետ խորհուրդ արեցի, որ պսակեի, խորհուրդ տվեց՝ ո՛ր ախչիկ կուզես, մեկ տանից ուղա. հըմի էս ախչիկները, ո՛ր հաց են բերում, քու ի՞նչն են։

Ասեց.—Էս իրեքն էլ իմ ախչիկներն են։

Ասեց.— Ես իրեքին էլ հավանում եմ, չեմ կարա վատ ասի, էս իրեք ախչիկն էլ կտա՞ս իմ իրեք տղին։

Ասեց.— Իրեքն էլ քե փեշքաշ ա։

Թաքավորը ձեռը տարավ շեպը, իրեք հատ մատանիք հանեց, դրեց ստոլի վրա, ասեց.

— Իրեք ախչկան էլ կանչա գա՛։

Իրեքին էլ կանչեց, էկան։ Թաքավորը ամենքին մի մատանիք դրեց մատները, ասեց.

— Իրեքդ էլ էլաք ընձի հարս։

Թաղատան կեր ու խում արեցին, շնորհավորեցին դրանց նշանդրեքը։

Թաքավորը ասեց.— Ես էթում եմ, մի ամիս ժամանակ կտաս, ես իմ տղեքին վե կալեմ, կգամ։

Թաքավորը էկավ իրա երկիրը։ Իրեք տղեքը էկան աղաքը. պզտիկ տղեն ասեց.

— Թաքավո՛ր ապրած, որ շատ ետացար, ուզում էի գայի, ման գայի քեզ, լավ էր, էկար։

Թաքավորն ասեց.— Աչքներդ լի՛ս, իրեքիդ էլ նշան եմ դրե, Ստամբոլա թաքավորի ախչկերքը։

Գնացին, վեր էկան իրանց պալատը. թաքավորը իրիկունը իրան տղեքին կանչեց, ասեց.

— Մեկ ամիս ժամանակ եմ ուզե, որ մեր պատրաստությունը տենանք ու լթանք, ախչկերքը բերենք։

Իրեք ձեռք ախչկա շոր կտրեցին, ըդոնց ամեն բաները հետը, իրեք ձեռք էլ տղի շոր՝ իրան տղեքին։

Ասեց.— Վեզի՛ր, դե՛, ժամանակ է, էթանք, տղեքին տանենք. հինդ հարուր էլ ձիավոր վե կալենք, մեր հարսները բերենք։

Պզտիկն ասեց.— Բիրատինով էթանք՝ էս պալատը ո՞վ ա մուղաթ կենում։

Թաքավորն ասեց.— Մեկին կհանձնենք, կէթանք։

Ասեց.— Անկարելի ա, ես չեմ էթա, ես կմնամ, դուք դնացեք բերեք։

Թաքավորը ասեց.— Շատ լավ ասում ես, դո՛ւ կաց։

— Վեզի՛ր,— ասեց թաքավորը,— մենք էրկու տղին կտանենք, էնաե կպսակենք. հարսը կբերենք, ըստի կպսակենք։

Պզտիկ տղեն ասեց.— Որ Ստամբոլա դուս կղաք, առաջին մի Կարմիր կոնտ կա, տակին մի աղբուր կա, որ կհասնեք ընտի՝ վեր չգաք. ընտի փորձանք կպատահի ձեզ, դու դիտաս, որ ես շատ եմ ման էկե, ամեն տեղն էլ դիտամ։

Թաքավորը ասեց.— Շա՛տ լավ։

Առավոտը ընկան ճանապարհ. դափով, զուռնով զնացին դպա Ստամբոլ, թաքավորի պալատը վեր էկան։

Կերան, խմեցին. բերեցին ախչկերքին կաղնացրին մեյդան, իրեքի շորերն էլ հագցրին։ Էրկու տղեն բերին, էրկու հարսի ձեռը բռնեցին, պուճուր ախչիկը ընենց կաղնած մնաց։

Ստամբոլա թաքավորը ասեց.— Որ երկու տղա ունեիր, իրեք ախչիկ խի էիր ուզում, քու ծուռնությունը բելլու արեց։

Ասեց.— Իմ գլուխը, քու գլուխը վկա, որ իրեք տղա ունեմ, էս մինն էլ պըտի տանեմ, ընտի պըտի պսակեմ. էն մնաց պալատը, ընտի հավատարիմ մարդ չունեինք։

Էդ էրկու տղին տարան, պսակեցին։ Էկան, քեֆ արեցին. առավոտը թաքավորը ճանապար քցեց։

Ստամբոլա թաքավորը ասեց.— Արի՛, մի-մին զայվա խմենք, նո՛ր կէթաս, կհասնես։ Մի քիչ խոսացին, ետացավ։

— Դե, ասեց,— մնաս բարի, ես էթամ, հասնեմ։

Ձեռ բռնեց ու ընկավ ճանապար։

Ընդոնք գնացին, Կարմիր կոնտի կշտին կաղնեցին։

Վեզիրն ասեց.— Թաքավորը ետացավ, չատերը վեր տվեք։

Չատերը վեր տվեցին, կերակուր էփեցին, թաքավորը էկավ հասավ, ասեց.

— Ըստիան բարձեք, ըստի խի՞ եք վեր էկե։

Վեզիրն ասեց.— Մութն ա, էս վախտ ո՞ւր էթանք, առավոտ կէթանք։

Ասեց.— Վեզի՛ր, չսեցի՞ր, պզտիկ տղես ի՛նչ ասեց. «Կոնտի վրա վտանգ կպատահի»։

Ասեց.— Թաքավո՛ր ապրած, ի՛նչ ես վախենում, հինգ հարուր ձիավոր մեր կշտին ըլի, մենք վախենանք։

Ասեց.— Կացե՛ք, որ ըտենց ա։

Լիսը բացվեց, տեհան մե հատ վիշապ չորս բոլորները կտրել ա. վե կացան, ասեցին.

— Սպանե՛ք, անց կենանք։

Վիշապն ասեց.— Ի՞նչ մտքի եք, ուղում եք պոչս պտրտեմ, ձեր հինգ հարուրին էլ վերջացնեմ. թաքավորի պզտի տղին խնայեցի ձեզ։

Թաքավորը ասեց.— Ճանապար տո՛ւր, էթանք։

Ասեց.— Քու պզտիկ տղին տուր ինձ, ես բիրատի բրախ տամ, ղնացեք։

Ասեց.— Կտա՛մ։

Ասեց.— Ճանապար կտամ, էթաք, որ նա ղրկես՝ գա, համա ընդրա նշանածը չեմ թողա տանեք։

Ճանապար տվեց, ամեն էլ անց կացան, պզտիկ տղի նշանածը մնաց կշտին։ Ընդոնք ընկան ճանապար, էկան։

Խաբար բերեցին պզտիկ տղին.— Աչքդ լի՛ս, թաքավորն էկավ։

Վեր կացավ, մի հարուր ձիավորով գնաց թաքավորի աղաքը։

Թաքավորը որ տղին տեհավ, լաց էլավ։

Տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած կենա, պըտի ուրախություն անես, խի՞ ես լաց ըլլում։

Ասեց.— Ընդրա համար եմ լաց ըլլում, քու պատվերը չպահեցինք. ես ըստոնց ճանապար քցեցի, թաքավորի հետ մի քիչ խորհուրդ արեցի, ետացա. էկա տեհա, քու ասած Կարմիր կոնտի վրա վեր են էկե, նեղացա, ասեցի. «Բարձեք, էթանք»։ Վեզիրն ասեց. «Գշերը մնանք ըստի, առավոտը էթանք»։ Ես էլ համոզվեցի, գշերը մնացինք։ Առավոտը տեհանք մի հատ վիշապ չորս բոլորներս կըտ-

բել ա։ Ուզեցանք վիշապին սպանեինք, որ անց կենաինք, վիշապն ասեց. «Ի՞նչ եք անում, ուզո՞ւմ եք պոչս պտրտեմ, ամենիդ էլ սպանեմ. ձեզ բաղշեցի թաքավորի պուճուր տղին»։ Ասեցի. «Ճանապար տուր, էթանք»։ Ասեց. «Ճանապար կտամ՝ ամա, քու պուճուր տղեն պըտի տաս ինձ». ես էլ խոստացա, տվի։ Ամենիս թողաց, էկանք, քու նշանածը չթողաց. էդ պատճառով լաց եմ ըլլում»։

Ասեց.— Ըսկի լաց մի ըլլի, եփոր մեռա, լաց էլի, հըմի քեֆ արա։

Քեֆ անելով բերեցին տուն։ Էրկու օր հարսանիք արեցին, պրծան։

Պուճուր տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած, էս քու պալատը, էս էլ քու հարսները, ես էթամ վիշապի հավարին։

Թաքավորը ասեց.— Մ՚էթա, էն վիշապը զարմանալի բան ա. արի մ՚էթա, ինչ էլավ, էլավ։

Ասեց.— Ես իմ էթալու դարտը չեմ, դու Ստամբոլի թաքավորի կշտին ամոթալի կմնաս։

Ընկավ ճանապար, գնաց հասավ վիշապին։

Վիշապն ասեց.— Բարի ես էկե, հազար բարին, իմ աչքին էկե, տեսնո՞ւմ ես, քու նշանածը ոնց եմ պահե. ինչ որ ասեմ, պըտի ընձ անկաչ անես, որ քու նշանածը տամ, տանես, որ չարեցիր՝ չեմ կարա տա, տանես։

Ասեց.— Ասա՛, քու ղուլլուխին կաղնած եմ։

Ասեց.— Դե՛, արի, գլխիս վրա նստի։

Էկավ, գլխի վրա նստեց։

Ասեց.— Անկաշներիցս բռնա, չվախենաս, քեզ պըտի բարձրացնեմ երկինքը։

Պտրտեց, պտրտեց ու ֆալաքի օխտը ղաթը հանեց։

Ասեց.— Թամաշա արա աշ կողմիդ վրա։

Ասեց.— Թամաշ եմ անում։

— Ի՞նչ ա էրևում։

— Քաղաք ա էրևում, ծառ ա էրևում։

Ասեց.— Էն Չինաստանի թաքավորի քաղաքն ա, օխտը ատեծ մի պալատ էրևո՞ւմ ա։

Ասեց.— Էրևում ա՛։

Ասեց.— Առաջին մի չինարի ծառ ա՞ էրևում։

Ասեց.— Էրևում ա։

Ասեց.— Վիրևում մի ախչիկ պտըտո՞ւմ ա, էրևո՞ւմ աւ

Ասեց.— Էրևում ա, կարմիր շորերը հագած պտըտում աւ

Պտըտեց, վեր բերեց գետինը։

Ասեց.— Դե՛, գնա՞, էն ախչիկը բեր ինձ համար՝ քու նշանածը տամ քեզ համար։ Մի հատ դաստախուն տվեց։— Էս դաստախունը կտամ քեզ, ինչ վախտ սովածանաս՝ դաստախունի մեջ կդթնես։

Վե կալավ դաստախունը, ընկավ ճանապար, շատ ու քիչ աստված գիտա, գնաց։ Էրկու հատ դև ըռաստ էկան. էկան, բռնեցին, ասեցին.

— Վաղուց ա ըսանի միս չէինք կերե։

Ասեց.— Ես ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ վե կկալե՞ք։

Ասեցին.— Որ մեզ կշտացնես, քու մուրազն էլ կկատարենք։

Ասեց.— Ի՞նչ կուտեք։

Ասեցին.— Օխտը հատ գոմեշ անճախ մեզ կշտացնի։

Սուֆրեն փռեց, ասեց.— Սուֆրա՛, օխտը հատ գոմեշ ուզում եմ քու միջին։

Օխտը հատ գոմեշ միշին էլավ։

Նստեցին. կերան, ղըրղըրփոցն քցեցին, մի թիքա ոսկոր էլ չթողացին միջին, բիրատի կերան։

Ասեցին.— Ո՞րտեղ ես էթում։

— Չինաստան եմ էթում։

Տարան, իրանց սընոռը անց կացրին. մի հատ մազ քաշին, տվին իրան, ասեցին.

— Նեղ տեղ ընկնես, էդ կրակա՛։

Ընկավ ճանապար ու գնաց. տեսավ մի ղոշուն ա գալի, որ տուտ ու տակ չիկա։ Գնաց, մոտացավ, տեհավ՝ բիրատի ձիավոր մրչեմ են, մնյմունի հետ կռվել են, հետ են դարձե, գալիս են։

Էկան, էդ տղին բռնեցին. վե կալան, տարան իրանց թաքավորի մոտը։

Թաքավորը ասեց.— Տարե՛ք, կերեք, ինչ եմ անըմ։

Տղեն ասեց.— Թաքավորը սաղ ըլլի, ձեզ կշտացնեմ, ընձնե ձեռ կվեկալե՞ք։

Ասեց.— Որ կշտացնես, ձեռ կվեկալենք։

— Ձեր կերածը ի՞նչ ա։

— Մեր կերածը ցորեն ա, դարի ու կորեկ։

Ասեց.— Ինչտար կուտեք։

Ասեց.— Հարուր խալվար կուտենք։

Սուֆրեն փռեց, ասեց.— Հարուր խալվար ցորեն, գարի ու կորեկ ըլի միչին։— էլավ, ու կուշտ կերան։

Թաքավորը հանեց ու մի թել տվեց իրան, ասեց.

— Ինչտեղ նեղ կընկնես՝ կփաթթես մատդ, մենք քեզ կհասնենք։

Վե կալան, տարան ճանապար քցեցին։

Գնաց, տեհավ մի ղոշուն ա դալի, տուտ ու տակ չկա։

Մոտացավ, տեհավ՝ բիրատի մեյմուն են. ձիավոր մրչեմի հետ կռվել են ու ետ են դառե։ Էկան էդ տղին բռնեցին, վե կալան, տարան իրանց թաքավորի մոտը։

Թաքավորը ասեց.— Ձեզ փեշքեշ ա, տարե՛ք, ինչ ունըմ եք արեք։

— Որ ձեզ կշտացնեմ, ընձանից ձեռ կվեկալե՞ք։

Ասեց.— Ձեռ կվեկալե՛նք։

Ասեց.— Ձեր կերածն ի՞նչ ա։

— Մեր կերածը բատամ ա, պոպոկ ա, պնդուկ։

— Ի՞նչդար կուտեք։

Ասեց.— Կուտենք վաթսուն խալվար։

Սուֆրեն փռեց, ասեց.

— Վաթսուն խալվար բատամ, պոպոկ ու պնդուկ ըլի։

Էլան ու կերան։ Շնորհակալ էլան տղիցը։

Հանեց էրկու հատ մատանիք տվեց։ Մեկը էս մատին դրեց, մեկը էն ձեռի մատին։

Ասեց.— Էս թաթխես՝ ջուրը կպնդվի, վրովը կէթաս, էն թաթխես՝ ջուրը կէթա։

Տարան, ճանապար քցեցին։ Գնաց, հասավ Չինաստանու քաղաքը։

Մի ջուր էր էթում քաղաքի ղրաղովը. տեհավ կարմունջ չկա վրեն, որ անց կենար, միտք արեց. «մեյմունի թաքավորը ըսենց էր ասըմ, յավաշ մի թաթխեմ ջրի մեջ, տեսնամ»։

Թաթխեց, ջուրը սառեց։ Վրովը անց կացավ էն էրեսը։ Էն մի մատն էլ թաթխեց, ջուրը գնաց։

Գնաց քաղաքը ման էկավ, մի պառավի տուն վեր էկավ։

Սուֆրեն փռեց, պառավի հետ նստեցին, հաց կերան։

Ասեց.— Նանե՛, էս ո՞ր քաղաքն ա, ես չեմ հարցրե։

Ասեց.— Էս Չինաստանա թաքավորի քաղաքն ա։

Ասեց.— Թաքավորը մոնց ա, բարի թաքավո՞ր ա։

Ասեց.— Լա՛վ մարդ ա, մի հատ աղշիկ ունի. ով գալիս ա էդ աֆշիկը ուղելու, ֆանտ ունի. ով որ ֆանտը չի գտնում, ուղողներու գլուխը տալիս ա. էդ մեկը վատ ա անում։ Մի տղա էլ ուներ, էդ պատճառով կհակառակեր թաքավորին, թաքավորը չի լսեց, գլուխը առավ, դնաց, կորավ։

Ասեց.— Նանի՛, կարամ ընդրս. ֆանտերը գթնի։

Ասեց.— Որդի՛, ընդուց ձեռ վե կալ, որ ինձ լսես՝ մի՛ էթա, ընդար մարդի գլուխը տվել ա։

Ասեց.— Նանե՛, ըստար ճանապար էկել եմ, տա-չտա էթամ, թե ֆանտերը գթա՝ աֆշիկը կտանեմ, թե չի գթա՝ գլուխս թո կտրի։

Պառկան, ասեց.— Նանի՛, առավոտը ինձ թեղ վեր կացրա։

Առավոտը լիսացավ, պառավը տղին վեր կացրեց։

Տղեն լվացվեց, աստված կանչեց, գնաց թաքավորի դռան կաղ-նեց։

Դռնապանը հարցրեց.— Ի՞նչ խնդիր ունես։

Ասեց.— Ես թաքավորի իրան հետ գործ ունեմ։

Դնացին, թաքավորին իմացրին, ասեցին.— Մի տղա էկել ա, քու հետ գործ ունի։

Ասեց.— Կանչեք դա՛։

Էկավ թաքավորի պալատը, օխտը անգամ գլուխ տվեց, վրա ութին ձեռ բռնեց ու կաղնեց։

— Հը՛,— ասեց,— ի՞նչ ա ասութունդ։

— Իմ ասութուն էն ա, էկել եմ քու աֆշիկ ուզեմ,— ասեց։

Ասեց.— Ա՛յ տղա, դու ափսոս տղա ես, մոնց էկել ես, ընենց գնա՛, քու արընքի տակն էլ չի մտնենք։

Ասեց.— Թաքավոր ապրած, հոքս մի քաշիր, ես ընդոնցից լավ չեմ, ես էկել եմ քու աֆշկա համար։

Ասեց.— Ես ֆանտեր ունեմ, իմ ֆանտերը պըտի գթնես։

Ասեց.— Քու ֆանտերին պատրաստ եմ, կգթնեմ, կտանեմ։

Նաղիր վաղիրին կանչեց, բիրատի թոփ արեց, էդ չինարի ծառի տակ նստացրեց։ Լիքը ստաքանը ջուր լցրեց, տվեց տղին. բերեց չորս հատ ոսկի բոդնոց, դրեց ծառի չորս բոլորը, ասեց.

— Նաղի՛ր, վեղի՛ր, թամաշա արեք. էս տղեն էս ստաքանը ձեռը նիլնե ծառը, վեր գա, որ ջուրը չթափի. ո՛ր թափեց՝ գլուխը կտրեմ։

Տղեն ծառին մոտացավ, մատանիքը թաթխեց ջրին մեջը ու նիլավ։ Նիլա՜վ գլխին նստեց։

Թաքավորը ասեց.— Վեր արի՛, լավ նիլար։

Էկան թամաշա են անում բոդնոցների վրա, որ ջուրը թափի՝ իմանան։ Տղեն քրտրնել էր, էրկու կաթիլ թափեց։

Թաքավորը ասեց.— Վեր արի՛, քու աճալն էկավ, թափեց ջուրը. ջալլա՛տ,— ասեց,— հաղր կաղնի։

Վեր էկավ, ստաքանը տարավ, տվեց թաքավորին։

Ասեց.— Գլուխը տվեք սրա։

— Ո՛չ,— ասեց,— քրտինքս թափեց։

Ասեց.— Անկարելի ա, ջուրը թափեց։

Նազիր վեզիրը մոտացան, ասին.— Գլուխը խի՞ ես տալի։— Մատը տվին բոդնոցի միջի ջրին,— ասեցին,— քրտինք ա։

Ասեցին.— Ա՛յ տղա, գնա՛, առավոտը արի, ըսօր պրծար։

Գնաց պառավի տունը. պառավը ասեց.— Ա՛յ իմ աչքերը քոռնա, արի՛, արի՛, նստի՛ր։

Խաբարը գնաց թաքավորի ախչկան.— Մի տղա, ստաքանը ձեռին, ծառը նիլավ, ջուրը չթափեց։

Առավոտը լիսացավ, էլի գնաց թաքավորի պալատը։

Խաբար տվին թաքավորին.— Տղեն էկել ա։

Թաքավորը հրամայեց.— Կկաղնացնեք չարի իրիկուն։

Տղեն կաղնեց։ Թաքավորը ասեց.— Էրկու պղինձ եռեսուն փթանոց լիքը եղ կլցնեք, կտանեք, կդնեք մի օթախի մեջ, կասեք. «Էս գչեր չարի լիս պըտի ուտես. ո՛ր չուտես, թաքավորը քու գլուխ պըտի կտրի»։

Տղեն մի թիքա կերավ, սիրտը տրորեց, ասեց.— Է՜ թաքավորը իմ գլուխ պըտի կտրի։— Բիրտան միտը ընկավ դևերը, համա մաղը կրակեց. կրակելու բաշտան, մեկ էլ տեհավ դուռը ճռացրին, էրկու դև մտան նեքսև.— Հը՛, թաքավորի տղա,— ասեցին,— ի՞նչ ա։

Ասեց.— Տենում եք պղնձները, ձեզ կանչեցի, որ ուտեք։

Ասեցին.— Էս քառասուն տարի ա եղի համ չենք տեհե։— Մրոթները կախեցին մեչը, էրկու պղինձն էլ թամիզացրին, լիզեցին։

Ընդոնք գնացին, թաքավորի տղեն գինջ քնեց։

Առավոտը լիսացավ. թաքավորը վե կացավ, նազիր վեզիրին կանչեց, ասեց.

— Էն մի բանիցը պրծացրիք, վաթսուն փութ եղը հազար ջան-

չի կարա ուտի, էն մինակ կարա՞ ըս գշեր ուտի. բեր ու գլուխդ զարկեք։

Գնացին, վեր կացրին, բերին թաքավորի մոտը։

Ասեց.— Էրեկ պրծար, ըսօր ի՞նչ ես ասըմ։

Ասեց.— Ըսօր էլ կպրծնեմ, էգուց էլ։

Գնացին, տեհան՝ պղինձները թամուզ կերե, սրփե։

Ասեց.— Գնացեք ըստրա օթախը, պահած կըլի, գթեք ու բերեք։

Գնացին, ման էկան, զատ չգթան։

Էկան, ասեցին.— Զատ չկա։

Ասեց.— Գնա՛, դինջացի՛, իրիկունը արի։

Խաբարը գնաց թաքավորի ախչկան, էգ ախչիկը զարմացավ։

Գնաց պառավի մոտը, դինջացավ, իրիկունը վե կացավ, էկավ։ Խաբարը տարան թաքավորին.— Տղեն էկել ա։

Թաքավորը նազիր վեզիրին կանչեց. տղին բերեցին, մի ղռան աղաբ կաղնացրին։

Ասեց.— Տասը խալվար կորեկ չափեք, բերեք ըստե, տաս խալ-վար էլ ցորեն, տաս խալվար էլ զարի բերեք. խառնեք հ՚իրար, օթախի մեջտեղ կիտեք։

Թաքավորը հրամայեց.— Էս կորեկ, էս գարին, էս ցորեն իրա-րից պըտի ջոկես, որ առավոտ գամ, չափնմ. թե ջոկեցիր՝ ախչիկս տարար, թե չջոկեցիր՝ գլուխդ անպատճառ պըտի կտրվի։

Տղեն մի բուռ վե կալավ, որ ջոկի՝ կորեկի մի հատը քցեց մի պուճախը, մի հատ ցորեն մի պուճախը, ասեց. «Զարի լիս մի բուռ չեմ կարա ջոկի»։ Բիրտան մրչեմը միտը ընկավ. թելը հանեց, փաթթեց մատը, մեկ էլ տեհավ՝ դուռը ճռացրեց. մրչեմները թա-փան, էկան։

Ասեց.— Խնդրում եմ, էս գարին, էս ցորենը, էս կորեկը ջոկեք, չուտեք համա, ձեր բաժինը ղռանը կտամ՝ կուտեք ու կէթաք։

Ըդրանց տուտը բացվեց, Մասիսու չարի Ալագյազ էկան, ջո-կեցին ցորենը մի յան, գարին մի յան, կորեկը մի յան, մի հատ չթողացին։

Դուս էկավ դուռը, սուֆրեն բացավ, ըդոնց բաժինն էլ տվեց, գնացին. Գլուխը դրեց ցորենի վրեն, արխային քնեց։

Լիսը բացվեց, թաքավորը վե կացավ. նազիր վեզիրին կանչեց էլի, ասեց.

— Դե՛, բերեք, տղի վիզը զարկեք։

Գնացին, աղին վե կալան, բերեցին։

— Վիզը զարկե՛ք,— հրամայեց։

Ասեց.— Խի՞ ես զարկում իմ վիզը, ես ջոկել եմ, մարդ դրկա, թո էթա, տենա, գա՛։

Մարդ դրկեց. գնաց, էկավ, ասեց.— Թաքավոր ապրած, ջոկած պրծած ա։

Ձափեցին, դուղ էլավ։

Ասեց.— Դե՛, գնա՛, առավոտը արի։

Խաբարը տարան Թաքավորի ախչկան. Թաքավորի ախչիկն ասեց.

— Հա՞ գիտի, էն տղեն որտե ա մնըմ։

Ասեցին.— Մի պառավի տան ա մնըմ։

Մի դարավաշ ուներ, հանեց մի բուռ ոսկի տվեց, ասեց.— Բերնիցդ բան չհանես, կէթաս պառավի տունը. պառավին կասես, էդ տղին ախչկա շորեր հաքցնի, իրիկուն բերի իմ մոտը։

Էդ ախչիկը վազեվազ գնաց պառավի տունը։ Պառավին ասեր.

— Թաքավորի ախչիկը ասըմ ա. «Թող էդ տղին ախչկա շորեր հաքցնի, բերի իմ կուշտը»։

Իրիկունը ախչկա շորեր հաքցրեց, վե կալավ տարավ։

Դռնապանը դուռը չէր բաց անըմ։

Ասեց.— Իմ ախչիկը տանըմ եմ Թաքավորի ախչկանից ուսում առնի։

Ասեց.— Խալխը ցերեկն են բերում, դու գշերն ես բերըմ։

Ասեց.— Հըմի պարապեցի, բերեցի։

— Դե՛,— ասեց,— տա՛ր։

Վե կալավ, տարավ։

Ասեց.— Խանը՛մ, իմ ախչկան ինչ կսարվացնես, սարվացրա. գշերը չի կարա ըստե մնա։

Թաքավորի ախչիկը հրամայեց.— Ամեն դարավաշ էթա իրա օթախը, խամ ախչիկ ա, խոսացնեմ, տենամ, ինչ կա հալա։

Ասեց տղին.— Դու էդ ֆանտերն որ իմացար, էգուց էլ կարա՞ս իմանա։

Ասեց.— Ձեմ գիտում, ինչ ֆանտ պըտի անի։

Ասեց.— Քառասուն ախչիկ պըտի բերի, քառասուն ձեռք սև շոր հաքցնի, սև ձիանը նիլցընի, սև քողերը պըտի քցի գլխներին, ջերկով կաղնացնի, քեզ պրտի հարցնի. «Իմ ախչիկը որն ա»։ Ներ-

բի դհիցը կհամբրես տասնըինը, վրա քսանին ես եմ, չը շրշկրլես։

Կանչեց պառավին.— Պառա՛վ, արի, քու ախչիկը վեր կալ տար, էգուց իրիկուն էլ բեր։

Լիսը բացվեց, տղեն գնաց թաքավորի մոտը։ Թաքավորը նագիր վեզիրին կանչեց, ասեց.

— Գնացեք, քառասուն ախչիկ բերեք, քառասուն սև ձիանը նիլցըրեք, սև շորերը հագցրեք, սև քողերը քցեք գլխներին։

Գնացին էնպես արեցին, ջերկուն կաղնացրին։ Տղին հրամայեց.

— Իմ ախչիկն ո՞րն ա, գթի՛։

Մտքի միջին համբրեց տասնըինը, ղուղ գնաց վրա քսանի ձիու դյամը բռնեց, ասեց.

— Էս տ քու ախչիկը։

— Տղա՛,— ասեց,— ղնա՛, առավոտը արի։

Տղեն գնաց պառավի տունը, ասեց.— Նանի՛, ախչկա շորերը բեր, հաքնեմ։— Հաքավ, գնաց թաքավորի ախչկա մոտը։

Թաքավորի ախչիկը ասեց.— Տղա՛, էղուց էլ կարմիր ձիանը նիլնենք, կարմիր շորերը կհաքնենք, կարմիր քողները պըտի քցենք գլխներիս. ամենի վերջը ես կկաղնեմ. կգաս, իմ ձիու դյամը կըրռնես։

Տղեն վեր կացավ, գնաց պառավի տունը։

Առավոտը վեր կացավ, գնաց թաքավորի պալատը։

Թաքավորը իրա նագիր վեզիրի հետ դուս էկավ, հրամայեց.

— Գնացե՛ք, քառասուն ախչիկը բերեք, կարմիր ձիանը նիլցըրեք, բերեք ըոտի ջերկա կաղնացրեք։ Էդպես արեցին։

Ասեց.— Ա՛յ տղա, իմ ախչիկը ո՞րն ա, գթի։

Տղեն գնաց, վերջի ձիավորի յախեն բռնեց, ասեց.

— Էս ա քու ախչիկը։

Ասեց.— Ըսօր էլ պրծար, գնա՛. գնա էգուց էլ արի։

Տղեն գնաց պառավի տունը, ախչկա շորերը հաքավ, գնաց թաքավորի ախչկա մոտը։

Թաքավորի ախչիկը ասեց.— Էքուց էլ սիպտակ ձիանը կընիլնենք, սիպտակ շորերը կհաքնենք, սիպտակ քողերը կքցենք գլխներիս, ամենի գլուխը ես կկաղնեմ, կգաս ձիու դյամը կբռնես, քաշես, թաքավորի աղաքը կկաղնացնես։

Տղեն վե կացավ, գնաց պառավի տունը։ Լիսացավ, առավոտն էկավ թաքավորի պալատը։

11—2573

Թաքավորը դուս էկավ, հրամայեց.—Գնացե՛ք, քառասուն ախչիկ բերեք, քառասուն ձեռք սիպտակ շոր հաբցրեք, սիպտակ ձիանը նիլցրեք, սիպտակ քողները քցեք գլխներին, բերեք ըստի, ջերկուն կաղնացրեք։

Էդպես արեցին։ Թաքավորը ասեց.— Իմ ախչիկը ո՞րն ա, գնա գթի, բե՛ր։

Գնաց, գլխի ձիավորի ձիու գյամը բռնեց. քաշեց, բերեց թաքավորի մոտը, ասեց.

— Թաքավոր ապրած կենա, վեց օր ա, իմ ջանը քեզնե չխնայեցի, էս էլ քու ախչիկն ա, քու ախչկա ջանն էլ ինձանից չխնայես։

Թաքավորը հրամայեց ախչկերքին, ամենն էլ ձիանոցից վեր էկան։

Ասեց.— Քողեքներդ էրեսներիցդ վեր կալեք, էդ տղին վեր կալեք, տարեք պալատը։

Թաքավորը գնաց պալատը տղի մոտը, հարցրեց.— Դու ի՞նչ տղա ես, իմ ֆանտերը մեկն էլ չիմացան, դու վեցն էլ իմացար։

Ասեց.— Ես էլ թաքավորի տղա եմ, էկա քու ախչիկն ուղելու, աստված հաջողեց, վեցն էլ իմացա։

Ասեց.— Պսակեմ ու իմ մոտին կաց։

Ասեց.— Խնդրում եմ ինձ ճանապար քցեք, իմ պսակը իմ հայրը թող տենա։

Ասեց.— Դու դիտաս։

Առավոտը զորքը զորապետով, ամենը դրեց ախչկա հետ, ճանապար քցեց։

Տղեն ասեց.— Թաքավո՛ր ապրած, բան պետք չէ, ամեն էլ քեզ փեշքեշ, էրկու ձի տու, նիլնենք, էթանք։

Թաքավորն ասեց.— Ա՛յ տղա, քեզ մի բան եմ ասում, քսանը հինգ տարեկան իմ տղեն կորել ա, ամեն բանը դու դիտում ես, դու կարող ես էդ տղին դթնիլը. ո՛ր գթար, բերեցիր, իմ թաքավորությունը կհանձնեմ քեզ, դե՛, բարի ճանապար ըլլի, գնացեք։

Վեր կացան էկան մեյմունի երկիրը։ Մեյմունները վեր կալան, տարան իրանց թաքավորի մոտը, թաքավորը ասեց.

— Բարի էկա՞ր, մեզ մի կշտացրա, քեզ ճանապար քցենք։

Ըստի սուֆրեն փռեց, հարուր խալվար սլոպոկ ու բադամի մեջ ուզեց։

Էղի կերան, խմեցին, տղին քցեցին ճանապար։

Գնաց, ձիավոր մրջեմի երկիրը հասավ։

Ձիավոր մրջեմները էկան աղաքը, վե կալան տարան իրանց թաքավորի մոտը։ Թաքավորը ասեց.

— Բարի ես էկել, մեզ կշտացրա, քեզ բարի ճանապար ըցենք։

Ըտի սուֆրեն փռեց, հարուր խալվար ցորեն ու գարի ուգեց։ Ըտի կերան, կշտացան, տարան իրանց սընոռից հանեցին, ընկան դևերի սընոռը։

Դևերը էկան աղաքը, ասեցին.

— Հա՜, թաքավորի տղա, մուրազիդ հասար։ Սոված ենք, մեզ կշտացրա, քեզ բարի ճանապար։

Սուֆրեն փռեց, ասեց.— Տասը գոմեշ ըլլի միշին։

Տաս գոմեշ էլավ միշին, ըդոնք կերան, կշտացան։

Վե կալան, տարան իրանց սընոռը անցկացրին։

Գնաց, հասավ վիշապի մոտը։

Վիշապն ասեց.— Խի՞ ետացար էդքան։

Ասեց.— Անճախ որ բերեցի, քի՞չ չարչարանք էր։

Ասեց.— Էդ ախչիկը մնա իմ մոտը, դու գնա, քու նշանածը հրեն, ընդի ծաղիկ ա թոփ անըմ, բեր։

Տղեն գնաց դպա իրա նշանածը, վիշապը ասեց.

— Ախչի՛, մագերդ փաթթա իմ շլնքովը։

Ախչիկը փաթթեց շլնքովը։

Վիշապը ճվաց ու էլավ մի քսանհինգ տարեկան տղա ու ընդի կաղնեց։

Էդ տղեն ու ախչիկը էկան ըդրա մոտը, թուրը քաշեց, որ ըդրան սպանի։ Էդ տղեն ասեց.

— Խի՞ ես տալի, էս իմ քիրն ա, բերեցիր իմ մոտը, շատերին ղրկել ի, որ իմ քվորը բերի, գնացել էր, չէր էկե, քեզ ղրկեցի՝ բերիր։ Էս իմ քիրն ա, բաղշեցի քեզ։

Տղեն էլ.— Իմ նշանածը բաղշեցի քեզ։

Նոր ձիանը նիլան, էրկու ախչիկ, էրկու տղա, դպա թաքավորի մոտը։

Խաբարը գնաց թաքավորին.— Աչքդ լի՛ս, տղեղ էկավ։

Թաքավորը վեր կացավ, զորք-զորպպետով գնաց աղաքը տղին։

Ջինաստանի թաքավորի ախչկա վրեն իրա տղին պսակեց։ Օխտն օր, օխտն գիշեր հարսանիք արեց։

Թաքավորի աղեն ասեց.— Չինաստանի թաքավորի տղեն գթել եմ, վեր կալեմ, տանեմ իրան թաքավորի մոտը։

Էդ ախչիկն ու էրկու տղեն էլան, գնացին։

Գնացին, ճանփեն կորցրեցին, ընկան մի չոլ, յասլան տեղ. քառասուն հարամու մեջ ընկան, հարամիրաշին ասեց.

— Տարե՛ք էդ էրկու տղին, սպանեք, շորները հանեք, բերե՛ք։

Թաքավորի տղեն ասեց.— Սպանեք ձեր ձեռը ի՛նչ կընկնի, ես էլ թաքավորի տղա եմ, էս էլ Չինաստանա թաքավորի տղեն ա, ես խոստանում եմ, չարի ձեր մահը ձեզ պահեմ, հըմի էլ ինչ որ սրրտներդ ուզում ա, ասե՛ք՝ ուտացնեմ։

Ասեց.— Մեր սիրտը շատ բան ա ուզում՝ խորոված, ոխչա՛ր, բա՛ն։— Սուֆրեն փռեց մեյդանը։

Ըդոնց ուզած բաները բիրատի սուֆրի մեջ դթնվավ։

Կերան, խմեցին։ Վե կացան ու գնացին, հասան Չինաստան։

Գնացին, թաքավորի պալատի դարվազի աղաքը վեր էկան։ Թաքավորին խաբար արին, ղուս էկավ.

— Աչքդ լի՛ս, որ տղեդ էկավ։

Տղին բերեց, պսակեց՝ օխտն օր, օխտը գշեր· իրա հոժար կամով թաքավորութունից վեր էկավ, իրա տղին դրեց թաքավոր։ Ըդբա քառասուն ձիավորին ամենքին մի նշան տվեց. ընկան ճանապար, էկան իրանց թաքավորի կուշտը։

Էդ քառասուն հարամի ձիավորին նշան տվեց, պահեց։

Թաքավորն էլ տղին ասեց.

— Անումը իմը ըլլի, թաքավորութունը դու արա։

Ընդոնք հասան իրանց մուրազին։